«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ, ՏԵՍԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ, ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/49-2»

«25» օգոստոսի 2021 թ.

ք. Երևան

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Հայկ Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և անհատ ձեռնարկատեր «Տիգրան Առաքելյան Վազգենի»-ն, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային տեխնիկայի, տեսադիտարկման համակարգերի, գրասենյակային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 900000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հաստատման օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այն չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում և (կամ) այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող

ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	Ա/Ձ Տիգրան Առաքելյան
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1	Ք. Երևան, Ա.Աիարոնյան 62
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ	Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150001172630300	Հ/Հ՝ 2052832354011001
ՀՎՀՀ 01522459	ՀՎՀՀ՝ 26556955
Գլխավոր տնօրեն	Էլ. Հասցե՝ tigran.arakelyan74@mail.ru
---------- Հ. Հարությունյան	Տնօրեն՝ ---------- Տ. Առաքելյան
/ստորագրություն/	
Կ.Տ	

Հավելված N 1
«25» 08. 2021թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/49-2» ծածկագրով Պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Համակարգչային տեխնիկայի, տեսադիտարկման համակարգերի, գրասենյակային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ

<< դրամ

Ծառայության							մատուցման	
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Մասնակցի առաջարկած միավոր գների հանրագումար /<< դրամ/	Ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
10	50311120/10	Տեսահսկման համակարգերի սպասարկում	Ներկայացված է Հավելված 1.1-ով	դրամ	600000	1	ք. Երևան, Հ.Անդրանիկի 1/ ք. Երևան, Տիչինային փողոց, N12/ ք. Արարատ Արարատի մարզ/	15.09.2021-14.09.2022թթ.

Այլ պայմաններ	
Ծառայության մատուցումը	10-րդ չափաբաժնի համար ծառայության մատուցումը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից կատարողին գրավոր (e-mail) պահանջագրի ներկայացման հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացում (Երևան քաղաքի տարածքում): << մարզերում գտնվող հասցեներում բոլոր ծառայությունների մատուցումը անհրաժեշտ է իրականացնել պահանջագրի ներկայացման հաջորդ օրվանից հաշված մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում: Բոլոր ծառայությունները պետք է մատուցվեն ժամանակին և որակյալ: Բոլոր փոփոխվող պահեստամասերը (կամ կոմպոնենտները) պետք է ապահովեն սարքավորումների անխափան և նպատակային շահագործումը: Կատարողի կողմից ներկայացված հեռախոսահամարը և էլ. հասցեն պետք է լինեն մշտապես հասանելի: Ծառայության ընթացքում օգտագործվող պահեստամասերի, այլ ապրանքների և նյութերի արժեքները ներառվում են ծառայության ընդհանուր գնի մեջ և տրամադրվում են Կատարողի կողմից: Բոլոր պահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված և որակյալ: Սարքեր և սարքավորումների անխափան և նպատակային շահագործումն ապահովելու նպատակով Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով կատարել տեխնիկական բնութագրով նախատեսված բոլոր ծառայությունների մատուցումը՝ ըստ Պատվիրատուի հայեցողության: Այցելությունները պետք է իրականացվեն աշխատանքային օրերին 9:30 – ից մինչև 12:30 և 13:30 – ից մինչև 16:30 ընկած ժամանակահատվածում: Անհրաժեշտությունից ելնելով ծառայության մատուցումը կարող է իրականացվել Կատարողի համապատասխան արհեստանոցներում, որի դեպքում սարքավորման (սարքավորումների) տեղափոխությունն ու վերադարձը իրականացվում է Կատարողի ուժերով և միջոցներով:

	Պատվիրատուի պահանջով Կատարողը պարտավոր է ներկայացնել դիագնոստիկայի ենթարկված սարքավորման կամ սարքավորումների արդյունքները էլեկտրոնային տարբերակով: Կատարողի մեղքով վնասված սարքավորումները կամ պահեստամասերը կամ այլ բաղկացուցիչ մասերը ենթակա են փոխարինման, Կատարողի միջոցներով և Կատարողի հաշվին: Յուրաքանչյուր ծառայության մատուցում պետք է ֆիքսի նախապես համաձայնեցված երկկողմանի ակտով, որը պետք է ներկայացվի պատվիրատուին ծառայության մատուցման նույն օրը:
Երաշխիքային ժամկետը	Երաշխիքային ժամկետը 10-րդ չափաբաժնի համար՝ առնվազն 365 օր, մատուցված բոլոր ծառայությունների համար:

*Վճարումը իրականացվելու է ամսեկան, ըստ փաստացի մատուցված ծառայությունների՝ հանձնման – ընդունման արձանագրության հաստատման օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրեն

Հ. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Տիգրան Առաքելյան
Ք. Երևան, Ա.Աիարոնյան 62
Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 2052832354011001
ՀՎՀՀ՝ 26556955
Էլ. Հասցե՝ tigran.arakelyan74@mail.ru

Տնօրեն՝ Տ. Առաքելյան

Հավելված N 1.1
«25» 08 2021թ. կնքված
«ԲԷՏ-ԳՀԾՁԲ-21/49-2» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ				
Հ/Հ	Ծառայության անվանումը	Համառոտ նկարագրություն (տեխնիկական բնութագիր)	չափի միավորը	Նախահաշվային գին
10		**Տեսահսկման համակարգերի սպասարկում**		
10.1	ԴՎՌ (dvr) 4 պորտ	Hikvision DS-7104HUHI-K1/կամ համարժեք/ փոխարինում (կամ անհրաժեշտության դեպքում տրամադրում): Պետք է աշխատի iVMS ծրագրով	հատ	55000
10.2	ԴՎՌ (dvr) 8 պորտ	Hikvision DS-7108HUHI-K1 /կամ համարժեք/ փոխարինում (կամ անհրաժեշտության դեպքում տրամադրում):Պետք է աշխատի iVMS ծրագրով	հատ	82000
10.3	ԴՎՌ (dvr) 16 պորտ	DS-7216HUHI-K2 /կամ համարժեք/ փոխարինում (կամ անհրաժեշտության դեպքում տրամադրում):Պետք է աշխատի iVMS ծրագրով	հատ	182000
10.4	Ներսի տեսախցիկների փոխարինում	DS-2CE56H0T-ITPF փոխարինում (կամ անհրաժեշտության դեպքում տրամադրում)	հատ	18000
10.5	Դրսի տեսախցիկների փոխարինում	DS-2CE16H0T-IT3F փոխարինում (կամ անհրաժեշտության դեպքում տրամադրում)	հատ	23000
10.6	Տեսախցիկների կարգաբերում	Ներսի և դրսի տարբեր մոդելի տեսախցիկների կարգաբերում	հատ	5500
10.7	Կոշտ սկավառակի փոխարինում	Կոշտ սկավառակի փոխարինում 2Tb, Sata (կամ անհրաժեշտության դեպքում տրամադրում), ST2000VX003-520	հատ	50000
10.8	Կոշտ սկավառակի փոխարինում	Կոշտ սկավառակի փոխարինում 3Tb, Sata (կամ անհրաժեշտության դեպքում տրամադրում), ST3000VX006-520	հատ	65000
10.9	Կոշտ սկավառակի փոխարինում	Կոշտ սկավառակի փոխարինում 6Tb, Sata (կամ անհրաժեշտության դեպքում տրամադրում)	հատ	135000

10.10	Վնասված ներքին (ներսի) լարերի փոխարինում	KBT-B-2 2x0,35մմ, գույնը սպիտակ:Վնասված ներքին (ներսի) լարերի փոխարինում 1 մետր (պետք է ապահովի 180մ և ավել հեռավորության վրա որակյալ տեսագրության ցուցադրումը մոնիտորին)	մետր	350
10.11	Վնասված արտաքին (դրսի) լարերի փոխարինում	KBT-B-2 2x0,35մմ, գույնը սև:Վնասված արտաքին (դրսի) լարերի փոխարինում 1 մետր (պետք է ապահովի 180մ և ավել հեռավորության վրա որակյալ տեսագրության ցուցադրումը մոնիտորին)	մետր	350
10.12	Վնասված արտաքին (դրսի) լարերի փոխարինում, տրոսով	KBK-ПТ-2 2X0,5մմ, գույնը սև:Վնասված արտաքին (դրսի)լարերի փոխարինում, 1 մետր, տրոսով (պետք է ապահովի 180մ և ավել հեռավորության վրա տեսագրության ցուցադրումը մոնիտորին)	մետր	500
10.13	Սնուցման սարքի փոխարինում	Սնուցման բլոկի փոխարինում առնվազն 12Վ 10Ա (կամ անհրաժեշտության դեպքում տրամադրում)	հատ	12500
10.14	BNC խրոցի (ատեկեր) փոխարինում	BNC խրոցի (ատեկեր) փոխարինում	զույգ	1500
			Ընդամենը 10-րդ չափաբաժին	**630700**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրեն

Հ. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Տիգրան Առաքելյան
Ք. Երևան, Ա.Աիարոնյան 62
Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 2052832354011001
ՀՎՀՀ՝ 26556955
էլ. Հասցե՝ tigran.arakelyan74@mail.ru

Տնօրեն՝ Տ. Առաքելյան

Հավելված N 2
«25» 08. 2021 թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/49-2» ծածկագրով Պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	նախատեսվում է ֆինանսավորել 2021-2022թթ. միջոցների հաշվին, ընդ որում՝				
			IV եռ. /2021թ./	I եռ. /2022թ./	II եռ. /2022թ./	III եռ. /2022թ./	Ընդամենը
10	50311120/10	Տեսահսկման համակարգերի սպասարկում	900000	900000	900000	900000	900000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Հ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրեն

Հ. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Տիգրան Առաքելյան
Ք. Երևան, Ա.Աիարոնյան 62
Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 2052832354011001
ՀՎՀՀ՝ 26556955
Էլ. Հասցե՝ tigran.arakelyan74@mail.ru

Տնօրեն՝ Տ. Առաքելյան

Հավելված 3
«25» 08. 2021 թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/49-2» ծածկագրով Պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ Ծառայությունները՝

N	Մատուցված Ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«25» 08. 2021 թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/49-2» ծածկագրով Պայմանագրի

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը Պայմանագրի համարը

գնման Պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված Ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն